Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի տնօրեն,
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
Է. Օրդուխանյան

«_____»
«23» 09 2024թ.

Առաջատար կազմակերպության կարծիքը Ամալյա Գագիկի Սաֆարյանի «Հավաքների ազատության սահմանադրական հիմքերի իրացման արդի հարցադրումները» թեմայով

ԺԲ.00.02 «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Առաջատար կազմակերպությանը ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը նվիրված է հավաքների ազատության սահմանադրական հիմքերի իրացման արդի հարցադրումների վերաբերյալ ուսումնասիրությանը:

Գրախոսվող հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ իրավական պետության առանցքային արժեքներից է խաղաղ հավաքների ազատության ճանաչումը և պաշտպանությունը: Հավաքների ազատության իրավունքի պաշտպանությունն անխուսափելիորեն էական նշանակություն է ձեռք բերում հատկապես այն երկրներում, որտեղ ժողովրդավարության կայացման հարցում առկա են լրջագույն խնդիրներ և միտված է ոչ միայն երաշխավորելու ժողովրդավարության արդյունքները, այլև հանդես գալու որպես ժողովրդավարության կայացման ու զարգացման կարևոր նախադրյալ:

Ինչ վերաբերում է հավաքների ազատության իրավունքի իրացմանը, ապա այն կարող է պայմանավորված լինել երկրում ժողովրդավարական սկզբունքների

կենսունակությամբ, քաղաքական ավանդույթների պահպանմամբ, քաղաքական համակարգի նորմատիվային ու գաղափարական տարրերի որակական հատկանիշների համընկնման առաջնահերթությամբ և, իհարկե, անձի քաղաքական ակտիվությամբ: Այս համատեքստում՝ ելակետային է ազատական իրավամտածողության կայացման ու դրա հասարակական ընկալման և ընդգրկման աստիճանը: Բացի դրանից, անհրաժեշտ է ընդգծել, որ հավաքների ազատությունն անմիջական առնչություն ունի հանրային իշխանության հետ, այն «ուղղված է հանրային իշխանության դեմ», ուստի այդ ազատության նկատմամբ վերաբերմունքը կարող է ընկալվել որպես նույն ազատության նկատմամբ պետության վերաբերմունքի հիմնարար չափանիշ, հատկապես՝ հանդուրժողականության աստիճանը գնահատելու տեսանկյունից:

Մեր կարծիքով՝ հավաքների ազատության իրավունքի իրացման հիմնախնդրի հետազոտությունը ներկայումս կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների համատեքստում հավաքների ազատության վերաբերյալ օրենսդրությունը կատարելագործելու տեսանկյունից: Ինչպես իրավակիրառ պրակտիկայի, այնպես էլ իրավաստեղծ գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրավատեսական համալիր մոտեցումների բացակայության պայմաններում հնարավոր չի լինում ապահովել հավաքների ազատության իրացման միասնական և կանխատեսելի լուծումներ, և, այդ առումով առավել անհանգստացնող է խիստ իրարամերժ մոտեցումների հանգամանքը:

Գրախոսվող աշխատանքի հիմնական խնդիրներն են.

- իրականացնել հավաքների ազատության էության, սոցիալական նշանակության և տեսակների վերլուծություն,
- հետազոտել հավաքների ազատության իրավունքի իրացման սահմանադրաիրավական հիմնախնդիրները,
- հետազոտել իրավական մշակույթը հավաքների ազատության իրավունքի համատեքստում,
- ներկայացնել համալիր լուծումներ Հայաստանի Հանրապետությունում հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման ուղղությամբ:

Թեկնածուական ատենախոսության ուսումնասիրությունից կարելի է ենթադրել, որ հեղինակը իր առջև դրված խնդիրները լուծել է պատշաճ գիտական մակարդակով:

Քննարկվող ատենախոսության գիտական նորույթն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ գիտական նյութերի և օրենսդրության հիման վրա իրականացվել է հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման համակողմանի հետազոտություն և առաջադրվել են միանգամայն նոր մոտեցումներ:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը ձևակերպել է տեսական հետևություններ և գործնական առաջարկություններ, որոնք ունեն տեսական և գործնական-կիրառական նշանակություն:

Ընդհանուր առմամբ՝ դրական գնահատելով գրախոսվող աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, աշխատանքի գիտական նորույթը ձևակերպված է առավել ընդհանրական գծերով, մինչդեռ աշխատանքի բովանդակությունը պարունակում է կարևոր դրույթներ գործող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ, որոնք արժանի էին, որպեսզի իրենց համապատասխան ձևակերպումները ամրագրվեին գիտական նորույթի դրվագում:

Երկրորդ, աշխատանքում հավուր պատշաճի օգտագործվել են քննարկվող հիմնախնդիրներին վերաբերող բազմաթիվ միջազգային և եվրոպական կառույցների իրավական ակտեր, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռները և այլ ակտեր, սակայն անտեսվել է դրանց իմպլեմենտացիայի խնդրի քննարկումը ազգային իրավական համակարգում և իրավակիրառ պրակտիկայում, ինչն ավելի բովանդակալից կդարձներ կատարված աշխատանքը:

Սակայն վերոնշված նկատառումները, ըստ էության, ունեն ցանկությունների բնույթ և ամենևին չեն կարող ստվերել կատարված աշխատանքը:

Աշխատանքի բովանդակությունը լիարժեքորեն է արտացոլված հեղինակի կողմից հրատարակված յոթ գիտական հոդվածներում:

Գրախոսվող աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Պետաիրավական հետազոտությունների բաժնի 2024 թվականի սեպտեմբերի 20-ի նիստում, որում ներկա էին՝ Պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Ա. Ղազանչյանը, ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դեցենտ Ա.Վ. Շուքուրյանը, կրտսեր գիտաշխատող՝ Վ.Խ. Հովսեփյանը:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ Ամալյա Գագիկի Սաֆարյանի «Հավաքների ազատության սահմանադրական հիմքերի իրացման արդի հարցադրումները» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ավարտուն հետազոտություն է, լիովին համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի Պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Հովհաննես Միքայելի Ստեփանյան

Պրոֆեսոր Հովհաննես Միքայելի Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Ինստիտուտի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու՝ Հայկ Նազարյան